ՊԱՎԵԼ ՍԵԴՐԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ – 60

Պավել Սեդրակի Ավետիսյանն արդեն (թերևս՝ դեռևս) 60 տարեկան է: Հայկական հնագիտության մերօրյա առաջատար գիտնականներից մեկը, միջազգային լայն ճանաչում ստացած մասնագետը:



Արմատներով "էրգրից" (Մուշ) սերած Պավել Ավետիսյանն իրերի բերումով ծնվեց Թբիլիսիում, սակայն մանկությունն ու պատանեկությունը վայելեց գաղթականության առաջին հանգրվաններից մեկում՝ թալինյան հողում: Ծագումնաբանական այս իրողությունն իր վառ դրսևորումներն ունեցավ մեր հոբելյարի մարդկային էության ու բնույթի ձևավորման վրա, գործելաոճում և մտածելակերպում: Հայրենասիրությունը, նպատակաուղղվածությունը, գիտելիքներ ամբարելու անհագ ձգտումը դարձան նրա կերպարի հիմնական բնորոշիչները:

Պ. Ավետիսյանի գիտակցական կենսագրության առաջին՝ ուսումնառության փուլն ընդգրկում է 1965–1975 թթ. կրթությունը Երևանի թիվ 36 ՝ Ռաֆֆու անվան դպրոցում, և 1975–1980 թթ. ուսանողությունը Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Ցավոք, մեզ հայտնի չէ նրա մանկապատանեկան "տվայտանքները" ապագա մասնագիտության ընտրության հարցում, բայց որ ուսանողական տարիները միանշանակ կանխորոշեցին Պ. Ավետիսյանի ապագան՝ փաստ է:

Համալսարանն ավարտելուց հետո նա ընդամենը մեկ տարի "կորցրեց"՝ 1980–1981 թթ. աշխատելով "Գիտելիք" ընկերությունում: Այդուհետ, նրա աշխատանքային ժամանակագրությունը միայն հնագիտական է՝ Երևանի հիմնադրման "Էրեբունի" թանգարան, Մայր ԲՈՒՀ-ի հնագիտության և ազգագրության ամբիոնի ավագ լաբորանտ, հնագիտության գիտահետազոտական լաբորատորիա և, վերջապես, 1993 թ. անդամագրվեց հայկական հնագիտության գլխավոր գիտահետազոտական կենտրոնի՝ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կոլեկտիվին:

Գիտության բնագավառում Պ. Ավետիսյանի ստեղծագործական առաջին հանգրվանը ձևակերպվեց 2003 թ. թեկնածուական ատենախոսության պաշտպանությամբ: Ընտրված թեման՝ "Հայաստանի միջին բրոնզի փուլաբաժանումը և ժամանակագրությունը" սկիզբն էր հնագիտության մեջ նրա թեմատիկ դավանաբանության և

հետաքրքրությունների ոլորտների ձևավորման: Հաջորդ նշանակալի հանգրվանը 2014 թ. դոկտորական ատենախոսության ("Հայկական լեռնաշխարհը մ. թ. ա. XXIV–IX դարերում") պաշտպանությունն էր, որին հաջորդեց նրա գիտական առաջընթացի ևս մի փաստագրում: Նկատառելով պատմական գիտությունների դոկտոր Պ. Ավետիսյանի գիտական հունձքը, միջազգային լայն ճանաչումը՝ նա ընտրվում է ՀՀ - ԳԱԱ թղթակից անդամ:

Պ. Ավետիսյանը օժտված է նաև գիտակազմակերպչական ու վարչական ընդգծված հմտություններով, որոնց համեմումը շնորհաշատ գիտնականի կերպարին, հնար տվեց իր գործընկեր աշխատակիցներին 2006 թվականից արդեն երրորդ անգամ նրան վստահելու ինստիտուտի տնօրենի պաշտոնը:

Պ. Ավետիսյանի գիտակազմակերչական ունակությունները շահեկանորեն դրսևորվեցին արտաինստիտուտային լայն գործունեության մեջ: Հատկանշելի է նրա դասախոսական աշխատանքը Մայր ԲՈՒՀ-ում՝ զուգորդված ավարտական քննական հանձնաժողովների նախագահի պաշտոնավարման հետ, բազմաթիվ դիպլոմային աշխատանքների ու թեկնածուական ատենախոսությունների ղեկավարումը: Նա գործուն մասնակցություն ունի ՀՀ մշակույթի նախարարության մի շարք հանձնաժողովների ու խորհուրդների՝ Միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի փոխնախագահ, նախարարության գիտամեթոդական և փորձագիտական խորհուրդների անդամ, իսկ վերջերս ԳԱԱ նախագահության որոշմամբ նշանակվեց "Լրաբեր հասարակական գիտությունների" հանդեսի գլխավոր խմբագիր:

Պետության կողմից նրա արդյունավետ գործունեությունը գնահատվեց Մովսես Խորենացու մեդալով (2011 թ.):

Հարկ է առավել հանգամանալի ներկայացնել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Պ. Ավետիսյանի գիտական գործունեությունը:

Պ. Ավետիսյանի՝ մի շարք գրքերով ու 100-ից ավել հոդվածներով ներկայացված գիտական ժառանգությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խմբում ընդգրկվում են ավելի քան 30 տարի շարունակ իրականացված հնագիտական տարբեր հուշարձանների պեղումների և հետախուզական աշխատանքների մասին գործնական հրապարակումները: Երկրորդ խումբը միավորում է այդ աշխատանքների արդյունքում ի հայտ եկած տեսական բնույթի աշխատանքները, որոնք համապատասխան հնագիտական նյութը դիտարկում են հնագույն Հայաստանի և Հին Արևելքի պատմամշակութային զարգացումների համատեքստում:

Հիշյալ հրապարակումները հիմնականում համապատասխանում են Պ. Ավետիսյանի գիտական կենսագրության շրջափուլերի հետ: Մասնավորապես, նրա գործունեության սկզբնական շրջանը (1980–1990-ական թվականներ) բնորոշվում է ակտիվ

դաշտային աշխատանքով, իսկ երկրորդ շրջանը (2000–2010-ական թվականներ)՝ դաշտային աշխատանքին համատեղ՝ կուտակված տվյալների դասակարգմամբ, տեսականացմամբ և մեկնությամբ: Ստորև փորձենք հակիրճ ցույց տալ Պ. Ավետիսյանի հրապարակումների կարևորությունը հայ հնագիտության զարգացման գործում:

Գիտական գործունեության ընթացքում Պ. Ավետիսյանը մասնակցել է բազմաթիվ հուշարձանների (դամբարանադաշտեր և բնակավայրեր) հետազոտությունների: Այդ աշխատանքներն իրականացվել են ինչպես հայկական, այնպես էլ՝ միջազգային արշավախմբերի շրջանակներում: Հիմնական դաշտային աշխատանքները ուղղված են եղել բրոնզի և երկաթի դարերի (մ. թ. ա. մոտ 3500–500 թթ.) հուշարձանների ուսումնասիրությանը, ինչը և հանդիսանում է Պ. Ավետիսյանի գիտական հետաքրքրությունների առանցքը: Աշխատանքների հաջորդ թիրախը նոր քարի և պղնձի-քարի դարերի (մ. թ. ա. մոտ 6000–3500 թթ.) հուշարձանների հետազոտությունն է եղել:

Պ. Ավետիսյանն իր գործունեությունն սկսեց Արագածի լանջերի բրոնզ-երկաթեդարյան հուշարձանների պեղումներով: Մասնավորապես, 1980-ական թվականներին նրա ղեկավարած առաջին պեղումները կատարվեցին Մաստարայի ու Թալինի բրոնզի և երկաթի դարերի դամբարանադաշտերում: Ըստ էության, այս պեղումները էլակետ հանդիսացան Պ. Ավետիսյանի հետագա գործունեության և գիտական աշխարհայացքի ձևավորման համար [հրապարակումների համար հմմտ. "Археологические открытия". М., 1986, с. 425–426; М., 1988, с. 467–468*; "Դաշտային հնագիտական աշխատանքները Հայաստանում 1989–1990 թթ.", Երևան, 1991, էջ 26–28,* "Von Majkop bis Trialeti", Bonn, 2010, S. 161–165*; տե՛ս նաև "Արարատյան դաշտի մշակույթը մ. թ. ա. XI–VI դարերում", Երևան, 2006 (395 էջ) մենագրությունը]:*

Պ. Ավետիսյանի տեսակետների զարգացման համար հատկապես կարևոր բեմահարթակ դարձան նրա ղեկավարած Ազարակի բրոնզ-երկաթեդարյան հուշարձանի պեղումները՝ 2000-ական թվականներին: Բազմաշերտ ժայռափոր բնակավայրի և սրբավայրի հետազոտությունը էապես ընդլայնեց բնագավառում առկա պատկերացումները լանդշաֆտային հնագիտության վերաբերյալ ("Археология, этнология и фольклористика Кавказа". Эчмиадзин, 2003, с. 52–57; "Mythical Landscapes Then and Now", Yerevan, 2006, pp. 256–260; "Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies", III/2, Yerevan, 2008, pp. 39–50*):*

Էական է Պ. Ավետիսյանի ներդրումը հայ-ամերիկյան ArAGATS *ծրագրի աշխատանքներում 2000-ական թվականների սկզբից մինչ օրս: Այդ ծրագրով առաջին անգամ հայ հնագիտության պատմության մեջ հետախուզական կանոնավոր աշխատանքներ իրականացվեցին ամփոփ մի տարածքում՝ Ծաղկահովտի գոգավորությունում, ինչպես նաև՝ պեղումներ այդ գոտու մի քանի կարևոր բնակավայրերում (Ծաղ-*

*կահովիտ, Գեղարոտ և այլն) (“*Археология, этнология, фольклористика Кавказа*”.* Тбилиси, 2004, с. 34–35; “Studi Micenei ed Egeo-Anatolici” XLII/1, 2000, pp. 19–59; “ArchՊologische Mitteilungen aus Iran und Turan”, 40, 2008, pp. 45–105; “American Journal of Archaeology”, 108, 2004, pp. 1–41; “Anatolian Iron Ages”, 5, London, 2005, pp. 175–185*): Այս հետազոտությունների առաջին փուլը՝ հետախուզական աշխատանքների մանրամասն վերլուծությամբ, ամփոփվեց ստվարածավալ մենագրությամբ՝ “Ծաղկահովտի գոգավորության ռեգիոնալ հետախուզությունը” վերնագրով (*The University of Chicago Oriental Institute Publications 134, Chicago, 2009, 540 p.*):*

Պ. Ավետիսյանի մասնակցությամբ իրականացված բրոնզ-երկաթեդարյան այլ հուշարձանների բազմաթիվ պեղումներից հատկապես հիշատակելի են աշխատանքները Լոռի-Բերդում (“Հին Հայաստանի մշակույթը”, XI, Երևան, 1998, էջ 20–21), Արտաշավանում (“Հանդէս Ամսօրեայ”, 1998, էջ 193–248), Սիսիանում (“Հայկական քաղաքակրթությունը հնագույն ժամանակներից մինչև քրիստոնեության ընդունումը”, Երևան, 2000, էջ 3–5, “Studi Micenei ed Egeo-Anatolici”, XLII/2, 2000, pp. 161–173*):*

Հարկ է կարևորել Պ. Ավետիսյանի ղեկավարությամբ վերջին տարիներին իրականացվող աշխատանքները Ծաղկասարի բարձրլեռնային վաղ բրոնզեդարյան բնակավայրում ու լայնածավալ պեղումները Քարաշամբի միջին և ուշ բրոնզեդարյան դամբարանադաշտում: Այս պեղումները էական հիմք են ստեղծում Հայաստանում բրոնզի դարում հասարակական զարգացումների մասին հիմնարար պատկերացումներ կազմելու (նյութերը պատրաստվում են հրատարակության):

*Բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի հետազոտության համատեքստում արժեքավոր ներդրում է Արագած լեռնահամակարգի հուշարձանների վերաբերյալ ամփոփ աշխատությունը՝ “Արագածը և իր հարակից շրջանները” վերնագրով, որը մանրամասն կատալոգի ու քարտեզների ձևով ներկայացնում է այդ տարածաշրջանի հնագիտական կարևոր միավորները: Գիրքը լույս է տեսել Օքսֆորդում և հայ հնագիտության առավել հովող աշխատանքներից է (*British Archaeological Reports International Series 1697, Oxford, 2007, 319 p.*):*

Կարևոր է նաև Պ. Ավետիսյանի ներդրումը նոր քարի և պղնձի-քարի դարերի հուշարձանների հետազոտության բնագավառում: Այստեղ, առաջին հերթին, պետք է հիշել 2004 թվից նրա ղեկավարությամբ Գոդեձոր բնակավայրում իրականացվող հայ-ֆրանսիական արշավախմբի պեղումները: Այս հուշարձանը մի կողմից բացահայտում է պղնձի-քարի դարից բրոնզի դարին անցման փուլի մշակութային զարգացումների առանձնահատկությունները, մյուս կողմից էլ ցույց տալիս Հայաստանի՝ Առաջավոր Ասիայի և Իրանական սարահարթի հետ կապերի ընթացքը (“Studies in Ancient Oriental Civilization”, 63, Chicago-Illinois, 2010, pp. 377–394; “Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies”, 1, 2006, pp. 6–18*): Պ. Ավետիսյանը էական ներդրում ունի նաև քննարկվող դարաշրջաններին վերաբերող այնպիսի հուշարձանների հետա-*

զոտման գործում, ինչպիսիք են Առատաշենը (“Հայաստանի հնագույն մշակույթը”, 2, Երևան, 2002, էջ 5–12, “Հին Հայաստանի մշակույթը”, XIII, Երևան, 2005, էջ 34–41, “Археология, этнология, фольклористика Кавказа”. Тбилиси, 2004, с. 31–33; “Ancient Near Eastern Studies”, Supplement 12, 2004, pp. 399–420; “Les cultures du Caucase. VIe–IIIe millnnaires avant notre nre”, Paris, 2007, pp. 37–63), *Մասիս բլուրը* (Backdirt 2013, Los Angeles, pp. 142–146; “Stone Age of Armenia”, Kanazawa, 2014, pp. 177–190) *և Արենին* (Antiquity 86, 2012, pp. 115–130; “Journal of Field Archaeology”, 37/1, 2012, pp. 20–33*): Այս հետազոտությունները գալիս են էապես լրացնելու մեր պատկերացումները Հայկական լեռնաշխարհում վաղ երկրագործական հասարակությունների առաջացման և զարգացման օրինաչափությունների մասին:*

*Վերոհիշյալ դաշտային աշխատանքների հիման վրա ձևավորվեցին Պ. Ավետիսյանի տեսական հետազոտությունների հիմնական թիրախները: Դրանցից ամենահիմնականը Հայաստանի հնագույն մշակույթների ժամանակագրության և փուլաբաժանման մասին խնդիրն է: Մինչ 1980-ական թվականների վերջերը հայ հնագիտությունն առաջնորդվում էր անվանի հնագետ Հ. Մարտիրոսյանի՝ Հայաստանի բրոնզի և երկաթի դարերին նվիրված հայտնի մենագրությամբ, որը լույս էր տեսել դեռևս 1964 թ.: Այդ աշխատանքի ի հայտ գալուց հետո անցել էին տարիներ, կուտակվել էր մեծաքանակ նոր նյութ, ինչի հիման վրա հայ հնագիտության մեջ անհրաժեշտություն էր առաջացել վերանայել ժամանակագրության և փուլաբաժանման ավանդական սանդղակները: Առաջին փորձերն այս կապակցությամբ իրականացվեցին 1990-ական թվականներին՝ Պ. Ավետիսյանի անմիջական մասնակցությամբ (*ИФЖ, 1990, № 1, с. 53–74*; “Դաշտային հնագիտական աշխատանքները Հայաստանում 1993–1995 թթ.”, Երևան, 1996, էջ 8–10): Հետագա հետազոտություններում Պ. Ավետիսյանը խորացրեց ու տեսական բարձր մակարդակի հասցրեց այդ խնդիրը (“Հայաստանի հնագույն մշակույթը”, 1, Երևան, 2001, էջ 5–7, 2, Երևան, 2002, էջ 13–18, 3, Երևան, 2003, էջ 52–60,* “Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies”, IV/2, 2009, pp. 55–76*):*

Ի տարբերություն նշված խնդիրներով զբաղվող այլ հեղինակների, Պ. Ավետիսյանն իր տեսակետները ձևավորում էր ռադիոածխածնային մեծ քանակությամբ տվյալների հիման վրա՝ համապատասխան տեսական ու մեթոդաբանական հենք ստեղծելով: Առաջին անգամ նա քննարկվող խնդիրը ներկայացնում էր դարաշրջանների ընդհանուր զարգացումների, սոցիալական միջավայրի տրանսֆորմացիայի և հաջորդափոխության դրսևորումների համատեքստում, ինչը, բնականաբար, ավելի հավանական էր դարձնում ժամանակագրության ու փուլաբաժանման մասին առաջ քաշված տեսակետները: Մարքսիստական զուտ էվոլյուցիոնիստական տեսությունների փոխարեն նա առաջարկում էր կիրառել ժամանակակից սոցիոլոգիական տարբեր մեթոդներ, որոնք ենթադրել էին տալիս ոչ միայն մշակութային միջավայ-

ների տրամաբանական հաջորդականությունը, այլև՝ համակեցությունը և խաչասերումը ժամանակի ու տարածության տարբեր միջավայրերում:

Պ. Ավետիսյանի հետազոտությունները հնագույն Հայաստանի հիմնարար հնագիտական խնդիրների վերաբերյալ աստիճանաբար տեղափոխեցին հարցադրումների շեշտը մետահնագիտական դաշտ: Այսպես, ճշտելու համար Հայկական լեռնաշխարհի դիրքը Հին Աշխարհի և մասնավորապես Հին Արևելքի համատեքստում՝ հեղինակն անդրադառնում է "աշխարհ-համակարգային" տեսությանը, որի հիմնական դրույթների (սահման, բնագիծ, սահմանային գոտի, ֆրոնտիր, շփման գոտի) վերլուծությամբ նա հիմնավորում է այն թեզը, թե հնագույն աշխարհ-համակարգը մ. թ. ա. VII հազարամյակի առաջին կեսում կազմալուծվում է՝ սկիզբ դնելով ռեգիոնալ ընդգրկում ունեցող պատմական նոր համակարգերի, որոնց սերտաճման արդյունքում ասպարեզ էին մտնելու բրոնզեդարյան աշխարհ-համակարգերը ("На стыке мир-систем: из истории контактных зон древности и современности", т. I. Ереван, 2016, с. 48–65*):*

Տեսական հետազոտությունների մակարդակում Պ. Ավետիսյանը քննարկում է նաև Հայկական լեռնաշխարհում կոմպլեքս հասարակության ձևավորման ու զարգացման խնդիրները, ցույց տալիս այն առանձնահատկությունները, որոնցով բնորոշվում է մեր տարածաշրջանը հինարևելյան ընդհանուր համատեքստում ("Discovering Archaeology", 1999, pp. 48–55; "American Journal of Archaeology", 108, 2004, pp. 1–41; "Archaeology in the Borderlands", Los Angeles, 2003, pp. 144–166*; ՊԲՀ, 2012, - 2, էջ 3–19): Այդ խնդիրները էապես արտացոլվել են նրա՝ արդեն հիշված դոկտորական ատենախոսության մեջ:*

Պ. Ավետիսյանը որոշ աշխատանքներում անդրադարձել է նաև հնաժողովրդագրության խնդիրներին՝ թաղումային համալիրների վերլուծության ու դրանց բնագիտական (մարդաբանական, գենետիկական) մեկնաբանության համատեքստում ("Դաշտային հնագիտական աշխատանքները Հայաստանում 1991–1992 թթ.", Երևան, 1994, էջ 24–27, "Հայաստանի հնագիտական հուշարձանները", 16, Երևան, 1995, էջ 98–104; "Cell", 163, 2015, pp. 571–582; "Current Biology", 27/1–6, 2017, pp. 1–13*):*

Հնագիտական պեղումների (Ագարակ, Գեղարոտ), ինչպես նաև պատմական (հինարևելյան) տվյալների շրջանակում, Պ. Ավետիսյանը քննարկման է ենթարկել հնագույն Հայաստանի սրբազան լանդշաֆտի և սրբավայրերի հետ կապված խնդիրները ("Արագածոտն. հոգևոր և մշակութային ժառանգություն", Երևան, 2003, էջ 53–55; "Հին Հայաստանի մշակույթը", XIII, Երևան, 2005, էջ 109–115, "Աստվածաշնչական Հայաստան", Երևան, 2005, էջ 82–90, "Mythical Landscapes Then and Now", Yerevan, 2006, pp. 256–260*):*

Առանձին հետազոտվել են խեցեղենի տիպաբանության խնդիրները՝ միջին բրոնզ-վաղ երկաթի ու միջին երկաթի և Վանի թագավորության դարաշրջանների համատեքստում, բացահայտվել են հնագիտական հիմնական նյութի զարգացման

օրինաչափությունները տարբեր դարաշրջաններում, դրանց փոխազդեցության առանձնահատկությունները ("Ancient Near Eastern Studies", Supplement 27, 2008, pp. 123–183; "Acta Iranica", 51, 2012, pp. 373–378*):*

Պ. Ավետիսյանին հետաքրքրել են նաև հնագույն Հայաստանի մետաղագործության առնչվող խնդիրները: Մասնավորապես, հիշարժան է ոսկու ֆենոմենի մասին նրա աշխատանքը ("Հին Հայաստանի ոսկին", Երևան, 2007, էջ 52–58, 89–98), ինչպես նաև՝ պղնձի ու բրոնզի և դրանց բնագիտական հետազոտության վերաբերյալ հրապարակումները ("Archaeometallurgy in Europe", v. 1, Milano, 2003, pp. 597–606; v. 2, Milano, 2003, pp. 311–318; "Anatolian Metal", V, Bochum, 2011, pp. 201–210)*:*

Հիշատակելի են Պ. Ավետիսյանի աշխատանքները հնագույն կենսապահովման մշակույթի ("Պատմության ֆակուլտետի տարեգիրք", Երևան, 2005, էջ 211–233, "Ագրոգիտություն", 5–6, 2005, էջ 275–280, "Գինին հայոց ավանդական մշակույթում", Երևան, 2005, 306 էջ) և հուշարձանների պահպանության ("Հայկական մշակութային ժառանգության պահպանությունը Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում", Երևան, 2008, էջ 124–128) խնդիրների վերաբերյալ:

Վերոհիշյալ հարցադրումների ընդհանրացմամբ Պ. Ավետիսյանը հանդես է եկել մի շարք հանրագիտարանային կամ կատալոգային ոճի աշխատանքներով ("У подножия Арарата". СПб., 2008, с. 23–28; "Армяне". М., 2012, с. 16–33; "Au pied du mont Ararat", Musnе de l'Arles et de la Provence Antiques, 2007, pp. 31–37; "Dans les montagnes d'Armnnie", Rouen-St Raphaul, 2007, pp. 63–65; "Archaeology of Armenia in Regional Context", Yerevan, 2012, pp. 7–20*), ինչպես նաև՝ պատմության դասագրքով ("Հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար", Երևան, 2001, էջ 17–26):*

Պ. Ավետիսյանի վերոհիշյալ աշխատանքներին բնորոշ են հնագիտական առկա խնդիրների տեսականացումը, հստակ մեթոդաբանության և նպատակաուղղված տերմինաբանության կիրառումը, միջմասնագիտական աշխատելաոճը: Այս տեսանկյունից Պ. Ավետիսյանի աշխատանքներն առանձնանում են գիտական բարեխղճությամբ և հայ հնագիտությունը բարձրացնում են միջազգային մակարդակի: Դրա առհավատչյան են Պ. Ավետիսյանի աշխատությունների բազմաքանակ հղումները ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

Նրա հնագիտական գործունեությունը համընկավ հայկական պետականության վերաստեղծման և գիտական կապերի ու աշխարհայացքի ուղղությունների արմատական փոփոխության հետ: Այս իմաստով, անկասկած, Պ. Ավետիսյանը մեծ ներդրում ունի հայկական հնագիտության նոր դպրոցի ստեղծման գործում:

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ,
ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ,
ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ